

# ԻՄԱՑԵՔ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Տեղեկատվական գրքույկ Ձեր իրավունքների մասին  
ԱՄՆ-ում աշխատելու ժամանակահատվածում:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ  
պայքարի ազգային թեժ գիծ  
1-888-373-7888 (ԱՄՆ-ի ներսում)





## ԻՄԱՑԵՔ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Վստահ ենք, որ Ձեր այցելությունն ԱՄՆ հիշարժան կլինի Ձեզ համար: Այնուամենայնիվ, եթե վատ իրավիճակում հայտնվեք, Դուք ունեք իրավունքներ և կարող եք օգնություն ստանալ:

### Դուք ունեք՝

- արդարացի վարձատրության իրավունք,
- խտրականության չենթարկվելու իրավունք,
- սեռական ոտնձգությունից և սեռական շահագործումից պաշտպանված լինելու իրավունք,
- առողջ և ապահով աշխատավայր ունենալու իրավունք,
- միությունների, ներգաղթողների և աշխատանքային իրավունքի հարցերով զբաղվող խմբերի օգնությանը դիմելու իրավունք,
- աշխատավայրում չարաշահումներ կատարվելու դեպքում հեռանալու իրավունք:

**ԵԹԵ ՁԵՐ ՀԱՆԴԵՊ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ, ԶԱՆԳԱՀԱՐԵՔ  
 1-888-373-7888 ՀԵՌԱՆՈՍՍԱՀԱՄԱՐՈՎ (ԱՄՆ-Ի ՆԵՐՍՈՒՄ), ՈՒՂԱՐԿԵՔ  
 “HELP” ԲԱՌԸ 233733 ՀԵՌԱՆՈՍՍԱՀԱՄԱՐԻՆ (ԱՄՆ-Ի ՆԵՐՍՈՒՄ) ԿԱՄ  
 ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ՆԱՄԱԿ ՈՒՂԱՐԿԵՔ [NHTRC@POLARISPROJECT.ORG](mailto:NHTRC@POLARISPROJECT.ORG) ԷԼ.  
 ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆ:**

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՄԻՇՏ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ՝  
 ՕԳՆԵԼՈՒ ԶԵՋ ԱՎԵԼԻ ՔԱՆ 200 ԼԵՋՈՒՆԵՐՈՎ: ԴՈՒՔ ՊԱՐՏԱՎՈՐ ՉԵՔ ԱՍԵԼ  
 ՁԵՐ ԱՆՈՒՆԸ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ: ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ  
 ԱՅՑԵԼԵՔ [WWW.TRAFFICKINGRESOURCECENTER.ORG](http://WWW.TRAFFICKINGRESOURCECENTER.ORG):**

Անմիջական վտանգի դեպքում զանգահարեք ոստիկանություն 911 հեռախոսահամարով (ԱՄՆ-ի ներսում): Հաղորդեք արտակարգ իրավիճակի բնույթը, Ձեր գտնվելու վայրը և հեռախոսահամարը, որից զանգահարում եք: Խնդրեք, որ Ձեզ թարգմանիչ արամադրեն, եթե անզլերեն չեք խոսում: Երբ ոստիկանությունը ժամանի, ցույց տվեք

նրանց այս գրքույկը և պատմեք նրանց, թե ինչ բնույթի չարաշահումների էք ենթարկվել:

Եթե Դուք ստանում եք A-3, G-5, H, J, NATO-7 տիպի կամ B-1 տիպի տնային աշխատողի ոչ ներգաղթային արտոնագիր, հարցազրույցի ժամանակ Ձեզ տրվում է այս գրքույկը: Նախքան մուտքի արտոնագիր տրամադրելը հյուպատոսական պաշտոնյան պետք է համոզվի, որ Դուք ստացել, կարդացել և հասկացել եք այս գրքույկի բովանդակությունը: Այլապես հյուպատոսական պաշտոնյան ինքը պետք է տրամադրի Ձեզ այս գրքույկը և քննարկի այն Ձեզ հետ: Հյուպատոսը պետք է պատասխանի նաև ցանկացած լրացուցիչ հարցի, որ Դուք կունենաք այս գրքույկում տեղ գտած տեղեկության վերաբերյալ:

## ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՆԿԱԽ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՏԵՍԱԿԻՑ

Եթե Դուք գտնում եք, որ Ձեր իրավունքները ռոնսահարվում են, ապա հատրդեք այդ մասին պետական մարմիններին, միություններին, հասարակական կազմակերպություններին կամ այլ կազմակերպություններին, որոնք կարող են օգնել Ձեզ: Եթե անզլերեն չեք խոսում, ինդրեք, որ Ձեզ թարգմանիչ տրամադրեն:

### 1. Արդարացի վարձատրության իրավունք

- Դուք ունեք վարձատրվելու իրավունք Ձեր կատարած ողջ աշխատանքի համար:
- Աշխատանքների մեծամասնության համար Դուք իրավունք ունեք վարձատրություն ստանալ առնվազն դաշնային նվազագույն աշխատավարձի դրույքաչափով: Դաշնային աշխատավարձի գործող նվազագույն դրույքաչափի մասին տեղեկանալու համար այցելեք [www.dol.gov/whd/minimumwage.htm](http://www.dol.gov/whd/minimumwage.htm):
- Դուք իրավասու կլինեք վաստակել ավելի շատ, քան սահմանված նվազագույնը, եթե
  - աշխատում եք մի նահանգում, քաղաքում կամ վարչաշրջանում, որի սահմանված նվազագույն աշխատավարձի դրույքաչափը ավելի բարձր է կազմում,
  - Ձեր աշխատանքային պայմանագրով/ծրագրով սահմանված է ավելի բարձր գումար:

- Շաբաթական 40 ժամից ավել աշխատելու դեպքում Ձեր աշխատած յուրաքանչյուր ժամի դիմաց Դուք արտաժամյա աշխատանքի վարձատրության իրավասություն կունենաք Ձեր սովորական ժամավճարի մեկուկես անգամի չափով: Օրինակ, եթե Ձեր սովորական ժամավճարը կազմում է 10 դոլար, սպա շաբաթվա ընթացքում 40-ը գերազանցած յուրաքանչյուր ժամվա աշխատանքի համար Ձեր գործատուն պետք է վճարի Ձեզ 15 դոլար:
- Գործատուի կողմից Ձեր աշխատավարձից կատարված պահումները կոչվում են նվազեցումներ: Ձեր աշխատավարձից կատարված յուրաքանչյուր պահումի համար գործատուն պետք է Ձեզ պարզաբանումներ տա:
- Եթե պահման արդյունքում Ձեր օրինական աշխատավարձի դրույքաչափը նվազում է, սպա այդ պահումը համարվում է անօրինական: Սովորաբար գործատուն չի կարող պահումներ կատարել համազգեստների, անվտանգության սարքավորումների, պահանջվող գործիքների, մատակարարման, սարքավորումների կամ հավաքագրման վճարների կատարման համար: Որոշ արտոնագրերի տեսակների դեպքում կացարանը պետք է տրամադրվի անվճար:
- Օրինական պահումներն ընտրվում են Ձեր կողմից, ինչպես օրինակ՝ առողջապահական ապահովագրությունը, անդամավճարները կամ աշխատավարձի վաղաժամ տրամադրումը կամ պահումներ, որ գործատուն պետք է կատարի դատական կարգապահական տույժերից ելնելով՝ երեխայի աջակցության, ալիմենտի կամ սնանկության վարույթի նպատակով: Որոշ բացառությամբ, ոչ ներգաղթային մուտքի արտոնագրով ԱՄՆ-ում աշխատողները պետք է դաշնային և պետական եկամտահարկ վճարեն: Ձեր և Ձեր գործատուի փոխհամաձայնությամբ՝ հնարավոր է եկամտահարկի պահումը կատարվի անմիջապես Ձեր աշխատավարձից: Ձեր գործատուն անմիջապես Ձեր աշխատավարձից կկատարի եկամտահարկի պահումներ, ներառյալ սոցիալական և բժշկական ապահովագրության հարկերը:

## 2. Խտրական վերաբերմունքից պաշտպանված լինելու իրավունք

- Անօրինական է գործատուի կողմից Ձեր հանդեպ ցուցաբերած վատ կամ խտրական վերաբերմունքը՝ պայմանավորված Ձեր տարիքով

**ԽՈՐՀՈՒՐԴ.** Ձեզ հետ ԱՄՆ տարեք այս գրքույկը՝ անհրաժեշտության դեպքում վերանայելու համար:



**ԽՈՐՀՈՒՐԴ.** Ձեր մնալու տևողությունից կախված՝ հնարավոր է, որ Ձեզանից պահանջվի ԱՄՆ-ում գտնվելու ժամանակահատվածում առողջապահական ապահովագրություն ունենալ: Դուք կարող եք նաև ֆինանսական աջակցության իրավասություն ունենալ ապահովագրության ծախսերի կրճատման համար:

(40 և բարձր), սեռով, մաշկի գույնով, ռասայական, ազգային/էթնիկական կամ կրոնական պատկանելությամբ, ինչպես նաև՝ գենետիկական ինֆորմացիայով (ներառյալ ընտանիքի բժշկական պատմությունը) կամ հաշմանդամությամբ:

- Ձեր գործատուն չի կարող Ձեզ խտրական վերաբերվել, եթե Դուք կլին եք, հղի կլին կամ կերակրող մայր:

**3. Սեռական ոտնձգությունից և սեռական շահագործումից պաշտպանված լինելու իրավունք**

- Ձեր գործատուի կողմից անօրինական է Ձեր հանդեպ սեռական ոտնձգություններ կատարելը: Ձեր գործատուն չպետք է որևէ սեռական կամ գենդերային բնույթի վիրավորական մեկնաբանություններ անի:
- Ձեր գործատուի կողմից անօրինական է Ձեզ սեռական շահագործման ենթարկելը, այդ թվում՝
  - պահանջել, որ Դուք որևէ սեռական գործողություն կատարեք,
  - թույլ տալ սեռական բնույթի հպումներ,
  - ուժ գործադրելու, խաբեության կամ հարկադրանքի միջոցով ստիպել Ձեզ որևէ սեռական գործողություն կատարել:

**4. Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունք**  
Եթե Դուք աշխատում եք ԱՄՆ-ում, սպա ունեք առողջ և ապահով աշխատանքային պայմանների իրավունք, այդ թվում՝

**ԽՈՐՀՈՒՐ**. Նախքան ԱՄՆ մեկնելը խորհրդակցեք արտագնա աշխատողների հարցերով զբաղվող կազմակերպությունների կամ արտագնա աշխատանք կատարած անձանց հետ: Նրանք կարող են Ձեզ տրամադրել այն անձանց կամ կազմակերպությունների հեռախոսահամարները, որոնց հետ Դուք կարող եք կապվել, եթե ԱՄՆ-ում գտնվելու ընթացքում Ձեզ մոտ հարցեր կամ խնդիրներ առաջանան:



- **Բուժօգնություն.** Աշխատանքի ընթացքում ստացած վնասվածքների կամ հիվանդության դեպքում Դուք իրավունք ունեք այդ մասին տեղյակ պահել Ձեր գործատուին: Եթե Դուք վնասվածք եք ստացել կամ վատ եք զգում աշխատավայրում, Դուք բուժօգնության դիմելու իրավունք ունեք: Գերակշիռ դեպքերում աշխատավայրում վնասվածքներ ստանալիս կամ հիվանդանալիս գործատուն պետք է Ձեզ համար անվճար բուժօգնություն սպասեովի, ինչպես նաև տրամադրի վնասվածքի հետևանքով կորսված աշխատավարձի չափը: Հնարավոր է, որ Դուք փոխհատուցման դիմում ներկայացնեք այն նահանգում, որտեղ աշխատում եք:
- **Պաշտպանիչ սարքավորումներ.** Եթե աշխատում եք թունաքիմիկատների կամ այլ վտանգավոր քիմիական միջոցների հետ կամ դրանց շրջակայքում, սպա գործատուն պարտավոր է նմանատիպ աշխատանքի համար Ձեզ տրամադրել անհրաժեշտ պաշտպանիչ միջոցներ, օրինակ՝ ձեռնոց կամ շնչուղիները պաշտպանող դիմակ:
- **Դասընթացներ.** Դուք իրավունք ունեք տեղեկացվել և դասընթացներ անցնել վտանգների, վնասների կանխարգելման մեթոդների, ինչպես նաև Ձեր աշխատավայրում ընդունված անվտանգության և առողջության պահպանման նորմերի մասին: Դասընթացը պետք է անցկացվի Ձեզ հասկանալի լեզվով և բառապաշարով:
- **Կացարան.** Եթե գործատուն Ձեզ կացարան է տրամադրում, սպա այն պետք է մաքուր և անվտանգ լինի: Ձեզ պետք է թույլատրվի դուրս գալ կացարանից ոչ աշխատանքային ժամերին:

- **Լոգասենյակներ.** Լոգասենյակները պետք է լինեն մաքուր և հասանելի: Ձեր գործատուն, ըստ անհրաժեշտության, պետք է Ձեզ լոգարանային պարագաներ տրամադրի:
- **Խմելու ջուր.** Դուք մաքուր խմելու ջուր ստանալու իրավունք ունեք:
- **Օճառ և մաքուր ջուր.** Անհրաժեշտության դեպքում Դուք իրավունք ունեք լվանալ Ձեր ձեռքերը օճառով և ջրով, հատկապես թունաքիմիկատների/քիմիական այլ միջոցների հետ առնչվելուց հետո, այդ թվում՝ մրգերի և բանջարեղենի, որոնք մշակվել են թունաքիմիկատներով կամ քիմիկատներով:
- **Անհետաձգելի բուժօգնություն.** Ձեր ծախսերը կարող են փոխհատուցվել, ուստի գործատուին անմիջապես տեղեկացրեք Ձեր վնասվածքի կամ հիվանդության մասին, որպեսզի նա կարողանա պատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր: Եթե բժշկի մոտ եք, կլինիկայում կամ հիվանդանոցում, պահանջեք Ձեր հիվանդության կամ վնասվածքի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները:

Եթե Դուք աշխատում եք թունաքիմիկատների և այլ վտանգավոր քիմիական միջոցների հետ կամ դրանց շրջակայքում,

- սպա Դուք իրավունք ունեք իմանալ և հասկանալ, թե ինչ քիմիկատների հետ գործ ունեք, և Ձեր գործատուն պարտավոր է ապահովել Ձեր մասնակցությամբ վճարովի դասընթաց աշխատավայրում կիրառվող քիմիկատների մասին:
- Ձեր գործատուն պարտավոր է տեղեկացնել Ձեզ, թե որտեղ և երբ են կիրառվել թունաքիմիկատներ, և երբ է առավել անվտանգ մտնել տվյալ տարածք՝ այդ նյութերից խուսափելու համար: Հեռու մնացեք այն վայրերից, որտեղ կիրառվում են թունաքիմիկատներ:

## 5. Միությունների, ներգաղթողների և աշխատանքային իրավունքի հարցերով խմբերի օգնությանը դիմելու իրավունք

- Որոշ բացառությամբ, Դուք իրավունք ունեք միավորվել Ձեր աշխատակիցների հետ՝ դիմելու Ձեր գործատուին աշխատավարձի բարձրացման և աշխատանքային պայմանների բարելավման խնդրանքով: Աշխատողների մեծամասնությունն իրավունք ունեն ստեղծել, անդամակցել կամ աջակցել աշխատավայրում որևէ միության:
- Ոչ աշխատանքային ժամերին Դուք կարող եք ներկա գտնվել հրապարակային ելույթների, հանրահավաքների և ցույցերի, որոնք ուղղված են Ձեր աշխատավայրում աշխատավարձերի բարձրացմանը կամ աշխատանքային պայմանների բարելավմանը:



- Դուք այս իրավունքն ունեք անկախ Ձեր ներգաղթային կարգավիճակից: Ձեր գործատուն չի կարող Ձեր դեմ որևէ գործողություն իրականացնել այն բանի համար, որ Դուք պաշտպանում եք Ձեր իրավունքները:
6. Աշխատանքից դուրս գալու իրավունք, երբ Ձեզ շահագործում են
- Եթե Ձեզ շահագործում են, Ձեր անվտանգությունն առաջնային է: Դուք պարտավոր չեք շարունակել աշխատել մի վայրում, որտեղ գործատուն Ձեզ շահագործման է ենթարկում:
  - Չնայած նրան, որ աշխատանքից հեռանալու դեպքում դուք կկորցնեք Ձեր կացության կարգավիճակը, Դուք, այնուամենայնիվ, կկարողանաք փոխել Ձեր արտոնագրի տեսակը կամ Ձեր գործատուին: Դրա համար հնարավոր է, որ Դուք ստիպված լինեք լքել Միացյալ Նահանգները: Անգամ եթե Ձեր կացության կարգավիճակը վավեր չէ, Ձեզ շահագործող գործատուից հեռանալուց հետո Դուք իրավասու եք օգնություն ստանալ:
  - Դուք կարող եք պաշտոնական բողոք կամ դատական հայց ներկայացնել Ձեր գործատուի դեմ և՛ աշխատելու ժամանակ, և՛ աշխատանքից դուրս գալուց հետո: Ձեր Գործատուի կողմից ի պատասխան որևէ գործողություն իրականացնելու կամ հաշվեհարդար տեսնելու ցանկացած փորձ համարվում է օրենքի խախտում:

**ԽՈՐՀՈՒՐԴ. Ձեր գործատուի կապալառուի կամ հավաքագրողի իրավաբանական խորհրդատվությունը կարող է կողմնակալ բնույթ կրել: Խորհրդատվություն ստանալու համար դիմեք անկախ փաստաբանի:**

## ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՈՉ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՏԵՍԱԿԻ

A-3, G-5, NATO-7, և B-1 տիպի տնային աշխատողի արտոնագիր



- Ձեր գործատուն պետք է Ձեզ տրամադրի ԱՄՆ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան աշխատանքային պայմանագիր:
- Պայմանագրում պետք է նշված լինի տնային աշխատողին վարձատրվելիք ժամավճարը: Ժամավճարը պետք է կազմի դաշնային, պետական և տեղական օրենքներով սահմանված ամենաբարձր նվազագույն աշխատավարձի չափ:
- Գործատուն պետք է Ձեզ պայմանագիր տրամադրի Ձեզ հասկանալի լեզվով: Համոզվեք, որ Դուք ծանոթ եք պայմանագրի կետերին և մի ստորագրեք որևէ փաստաթուղթ, որի բովանդակությունը չզիտեք:

Լրացուցիչ պահանջներ A-3, G-5 և NATO-7 տիպի մուտքի արտոնագիր կրող տնային աշխատողներին համար.

*Պայմանագիրը պետք է ներառի առնվազն հետևյալ դրույթները՝*

- Համաձայնություն գործատուի կողմից, որ նա գործելու է ԱՄՆ օրենսդրության համաձայն,
- Տեղեկություն աշխատավարձի վճարման տարբերակի և հաճախականության, աշխատանքային պարտականությունների, շաբաթական աշխատանքային ժամերի քանակի, ոչ աշխատանքային օրերի, հիվանդության պատճառով բացակայության և արձակուրդային օրերի մասին, ինչպես նաև
- Համաձայնություն գործատուի կողմից, որ նա չի պահի Ձեր անձնագիրը, աշխատանքային պայմանագիրը կամ Ձեզ պատկանող այլ անձնական իրեր:

H-2A տիպի գյուղատնտեսության աշխատողի ժամանակավոր մուտքի արտոնագիր.

- Դուք չպետք է միջնորդավճարներ տաք աշխատանքի տեղավորման ընկերությանը:
- Դուք պետք է գրավոր աշխատանքային պայմանագիր ստանաք Ձեզ հասկանալի լեզվով: Այն պետք է պարունակի մանրամասն տեղեկություն աշխատավարձի, աշխատանքի տևողության, աշխատանքային ժամերի, արտոնությունների (ներառյալ փոխադրամիջոց, կացարան, սնունդ և խոհանոցային հարմարություններ) և Ձեր աշխատավարձից կատարված պահումների մասին:

- Դուք արդարացի վարձատրության իրավունք ունեք, անգամ եթե աշխատում եք գործարքային հիմունքներով:
- Ձեր գործատուն պետք է տրամադրի կամ վճարի ինչպես Ձեր ԱՄՆ ժամանման, այնպես էլ Ձեր կացարանից աշխատավայր հասնելու համար առօրյա ճանապարհածախսը կամ էլ փոխհատուցի Ձեր ողջամիտ ծախսերը Ձեր պայմանագրի գործողության ժամկետի կեսն անցնելուն պես: Ձեր աշխատանքային պայմանագրի գործողության ավարտից հետո գործատուն պետք է տրամադրի կամ վճարի Ձեր հետդարձի, ինչպես նաև աշխատավայրից դեպի կացարան առօրյա ճանապարհածախսը: Ձեր գործատուից հնարավոր է պահանջել, որ նա փոխհատուցի Ձեր ԱՄՆ ժամանման և մուտքի արտոնագրի միջնորդավճարի ծախսերը առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում, եթե Ձեր աշխատավարձի և ծախսերի տարբերությունը կազմում է ավելի քիչ քան ԱՄՆ-ում սահմանված նվազագույն աշխատավարձը: Ձեր գործատուն պետք է Ձեզ տրամադրի նաև անվճար փոխադրամիջոց՝ գործատուի կողմից տրամադրված կացարանից աշխատավայր հասնելու համար:
- Դուք սզատված եք ԱՄՆ-ում սցիալական ապահովագրության և բուժօգնության հարկերից որպես Ձեր H-2A մուտքի արտոնագրի հետ կապված ծառայությունների մատուցման համար կատարված վճարների փոխհատուցում:
- Որպես կանոն, գործատուն պարտավոր է առաջարկել Ձեզ պայմանագրի գործողության ժամկետներով սահմանված ընդհանուր աշխատաժամերին կամ աշխատանքային օրերի առնվազն 3/4-ին հավասար պայմաններով աշխատանք:

#### H-2B տիպի ոչ գյուղատնտեսական աշխատողի ժամանակավոր մուտքի արտոնագիր

- Դուք չպետք է միջնորդավճարներ տաք աշխատանքի տեղավորման ընկերությանը:
- Դուք պետք է ստանաք աշխատանքի ընդունման մասին գրավոր հրաման Ձեզ հասկանալի լեզվով: Այն պետք է պարունակի մանրամասն տեղեկություն աշխատավարձի, աշխատանքի տևողության, աշխատանքային ժամերի, արտոնությունների (ներառյալ փոխադրամիջոց, կացարան, սնունդ և խոհանոցային հարմարություններ) և Ձեր աշխատավարձից կատարված պահումների մասին:

- Որպես կանոն, գործատուն պարտավոր է յուրաքանչյուր 12 շաբաթյա ժամկետի համար Ձեզ առաջարկել ընդհանուր աշխատաժամերին կամ աշխատանքային օրերի առնվազն 3/4-ին հավասար պայմաններով աշխատանք:
- Դուք արդարացի վարձատրության իրավունք ունեք, անգամ եթե աշխատում եք գործարքային հիմունքներով:
- Ձեր գործատուն պետք է տրամադրի կամ փոխհատուցի Ձեր ԱՄՆ ժամանելու ճանապարհածախսը, ինչպես նաև կենսապահովման ծախսերը մինչև պայմանագրի գործողության ժամկետի կեսը լրանալը: Ի հավելումն, Ձեր գործատուն պետք է վճարի Ձեր հետդարձի ճանապարհածախսը՝ ներառյալ կենսապահովման ծախսերը, եթե Ձեր աշխատանքի ժամկետն ավարտվել է, կամ Դուք որևէ պատճառով ազատվել եք աշխատանքից նախքան աշխատանքի սահմանված ժամկետի ավարտը: Ձեր գործատուից հնարավոր է պահանջել, որ նա փոխհատուցի Ձեր ԱՄՆ ժամանման և մուտքի արտոնագրի միջնորդավճարի ծախսերը առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում, եթե Ձեր աշխատավարձի և ծախսերի տարբերությունը կազմում է ավելի քիչ քան ԱՄՆ-ում սահմանված նվազագույն աշխատավարձը:

#### J-1 տիպի փոխանակման ծրագրերով այցելուների մուտքի արտոնագրեր

- Հաստատված DS-2019 ձևաթուղթը ներկայացնում է Ձեր ծրագրի ժամկետները, փոխանակման ծրագրի տեսակը, Ձեր հովանավորի անունն ու Ձեզ հյուրընկալող հաստատությունը, որտեղ իրականացվելու է փոխանակման ծրագիրը:
- Ձեր հովանավորը պետք է ճշգրիտ բացատրի բոլոր ծախսերը, պայմանները և սահմանափակումները Ձեր փոխանակման ծրագրի շրջանակներում:

#### Ամառային աշխատանք և ճամփորդություն

- Եթե Դուք նախապես աշխատանք չեք գտել, սպա Ձեր հովանավորը պետք է աջակցի Ձեզ աշխատանք գտնելու հարցում, երբ Դուք ժամանեք ԱՄՆ:

#### Պրակտիկա և վերապատրաստում

- Ձեր հովանավորը պետք է Ձեզ հետ հարցազրույց անցկացնի անձամբ, հեռախոսով կամ վեբ խցիկի միջոցով:



**ԽՈՐՀՈՒՐԴ.** Ձեր գործատուն պարտավոր է ժամանակին վարձատրել Ձեզ: Երկու շաբաթը մեկ վարձատրվելը ԱՄՆ-ում ընդունված պրակտիկա է:

Ձեր հովանավորը պետք է Ձեզ տրամադրի պրակտիկայի կամ վերապատրաստման անցկացման պլան (DS-7002), որն իր մեջ ներառում է հայտարարագիր ստացվելիք եկամուտների վերաբերյալ, ինչպես նաև ծրագրի վերապատրաստման նպատակների ամփոփ նկարագիր: Դուք շաբաթական առնվազն 32 աշխատանքային ժամ պետք է ունենաք:

- Ձեր հովանավորը պետք է Ձեզ տրամադրի Ձեր կողմից կատարվելիք ծախսերի և վճարների, ինչպես նաև ԱՄՆ-ում կենսապահովման ծախսերի մոտավոր հաշվարկի մասին հայտարարագիր:
- Ձեր հովանավորը պատասխանատու է, որ Դուք ունենաք բժշկական սպասնովագրություն, սակայն պարտավոր չէ ինքը վճարել դրա համար կամ սպասնովել այն Ձեզ համար:

**Au Pair:**

- Ձեզ հյուրընկալող ընտանիքը պետք է օգնի Ձեզ ներգրավվել և հաճախել դասընթացների բարձրագույն ուսումնական հաստատությունում և այդ դասընթացների համար վճարել մինչև 500 դոլար:
- Դուք ստիպված չեք աշխատել օրական 10 ժամից կամ շաբաթական 45 ժամից ավել:
- Ձեր խորհրդականը պետք է կանոնավոր կերպով Ձեզ և Ձեզ հյուրընկալող ընտանիքի հետ կապ հաստատի:

ԽՈՐՀՈՒՐԴ. Նախքան ԱՄՆ մեկնելը բոլոր կարևոր փաստաթղթերը պատճեններ երկուական օրինակով, մասնավորապես՝ Ձեր անձնագիրը և ԱՄՆ մուտքի արտոնագիրը, Ձեր աշխատանքային պայմանագիրը և մնացած բոլոր անձը հաստատող փաստաթղթերը: Այս պատճենների մի օրինակը հանձնեք Ձեր երկրում որևէ վստահելի անձնավորության, մյուսը վերցրեք Ձեզ հետ:

“M”-ը նշանակում է, որ Դուք ԱՄՆ բազմակի մուտքի իրավունք ունեք: Եթե այդ դաշտում նշված է որևէ թիվ, ապա այն ցույց է տալիս, թե բանի-անգամ կարող եք մուտք գործել ԱՄՆ:



“R” նշանակում է սովորական, “Class”-ը մուտքի արտոնագրի տեսակն է:

«Ժամկետի սպառման ամսաթիվ»-ը ցույց է տալիս վերջին օրը, որ Դուք կարող եք մուտք գործել ԱՄՆ: Այն կապ չունի Ձեր ԱՄՆ-ում մնալու տևողության հետ:

«Անտոսցիան» կարող է հավելյալ տեղեկություն պարունակել Ձեր մուտքի արտոնագրի մասին: Օրինակ՝ ուսանողական վիզայի վրա երևում է SEVIS համարը և Ձեր ուսումնական հաստատության անվանումը:

## ՁԵՐ ՈՉ-ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ

Ոչ-ներգադրյալին մուտքի արտոնագիրը պաշտոնական փաստաթուղթ է, որը թույլ է տալիս ֆիզիկական անձանց ճամփորդել ԱՄՆ՝ աշխատելու, սովորելու կամ մշակութային փոխանակման ծրագրի մասնակցելու նպատակով: Դուք պետք է ոչ ներգադրյալին արտոնագրի դիմում ներկայացնեք արտերկրում ԱՄՆ դեսպանատանը կամ հյուպատոսարանում: Ոչ-ներգադրյալին արտոնագիրը ստանալուն պես Դուք կարող եք ճամփորդել ԱՄՆ և ներկայացնել այն ներգադրյալին

ծառայության պաշտոնյային մուտքի թույլտվության համար: Եթե Ձեր մուտքի արտոնագրի գործողության ժամկետը սպառվել է, Դուք պետք է ձեռք բերեք նորը նախքան նորից ԱՄՆ մուտք գործելը:

Երբ Դուք մուտք գործեք ԱՄՆ, ներգաղթային ծառայության պաշտոնյան Ձեր անձնագրում կդնի կնիք՝ նշելով Ձեր՝ երկիր մուտք գործելու ամսաթիվը, մուտքի արտոնագրի տեսակն ու ԱՄՆ-ում Ձեր կացության վերջնաժամկետի օրը: Դուք պետք է մեկնեք ԱՄՆ-ից նախքան Ձեր I-94

էլեկտրոնային ձևաթղթի վրա նշված ամսաթիվը, որպեսզի չկորցնեք Ձեր օրինական կարգավիճակը, եթե արդեն ԱՄՆ քաղաքացիության և ներգաղթի ծառայությանը Ձեր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմում չեք ներկայացրել: Դուք կարող եք ստուգել Ձեր I-94 ձևի արձանագրումները՝ անցնելով

<https://i94.cbp.dhs.gov> հղումով:

## ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԿԻՆԳ

Մարդկանց թրաֆիքինգի զոհերն ունեն պաշտպանության և ծառայությունների իրավասություն և կարող են ունենալ որոշ հանրային արտոնություններ: Մարդկանց թրաֆիքինգը հանցագործության տեսակ է, որն ընդգրկում է ուժի կիրառման, խարդախության կամ հարկադրանքի միջոցով երեխաների կամ մեծահասակների շահագործում մարմնավաճառության նպատակով, ինչպես նաև ցանկացած անհատի շահագործում՝ հարկադիր աշխատանք կատարելու նպատակով: Նմանատիպ շահագործում իրականացնողները, ներառյալ աշխատանքային թրաֆիքինգով զբաղվողները, կավատները և մարմնավաճառության ծառայության գնորդները, կարող են դատապարտվել դաշնային և պետական հակաթրաֆիքինգային օրենքներով: Աշխատանքային և սեռական թրֆիքինգով զբաղվողները կարող են ենթարկվել թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական պատասխանատվության: Ստորև ներկայացված են նախագգուշացնող նշաններ, որոնք կարող են վկայել մարդկանց թրաֆիքինգի մասին՝



**ԽՈՐՀՈՒՐԴ.** Երբ ժամանեք ԱՄՆ, պահեք Ձեր անձնագիրն ու մյուս ճամփորդական փաստաթղթերը Ձեզ մշտապես հասանելի մի ապահով վայրում: Գործատուն Ձեր անձնագիրն իր մոտ պահելու իրավասություն չունի:

### Սպառնալիքներ և վախ

Թրաֆիքինգով զբաղվող և նրանց օգնող անձինք կարող են սպառնալ կամ անհարեկչական այլ միջոցների դիմել, որպեսզի Դուք և մյուսները վախենաք փախուստի դիմել: Օրինակ՝

- Կիրառել ծեծ, ֆիզիկական կամ սեռական բռնություն,
- Կիրառել ծեծի, ֆիզիկական կամ սեռական շահագործման սպառնալիքներ,
- Աշխատողին փակի տակ պահել կամ արգելել նրան դուրս գալ կացարանի կամ աշխատավայրի տարածքից,
- Աշխատողին կամ նրա ընտանիքին վնաս պատճառելու սպառնալիքներ, եթե նա փորձի հեռանալ, դժգոհել իր նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքից, իրավիճակի մասին տեղյակ պահել համապատասխան մարմիններին կամ օգնություն փնտրել,
- Աշխատողին արտաքսելու կամ ձերբակալելու սպառնալիքներ, եթե նա փորձի օգնություն փնտրել,
- Վնաս պատճառել կամ սպառնալիքներ կիրառել այլ աշխատողների նկատմամբ, ովքեր փորձել են հեռանալ, դժգոհել, զեկուցել իրավիճակի մասին կամ օգնություն փնտրել, կամ սպառնալիքներ, որ իրենք կգտնեն և հետ կվերադարձնեն բոլոր նրանց, ովքեր կփորձեն փախուստի դիմել:

## Պարտք

Թրաֆիքինգով զբաղվող անձինք և նրանց օգնականները կարող են պահանջել, որ Դուք որևէ աշխատանք կատարեք, ծառայություն մատուցեք կամ զբաղվեք մարմնավաճառությամբ՝ պարտքը վերադարձնելու համար: Որոշ դեպքերում դրանք անհայտ ծագման պարտքեր են, որ պարտադրվում են Ձեզ թրաֆիքինգով զբաղվող անձանց կողմից: Օրենքին դեմ է, պարտքի գործուն օգտագործելով, ստիպել Ձեզ շարունակել աշխատել, ծառայություններ մատուցել, զբաղվել մարմնավաճառությամբ կամ չթողնել Ձեզ հեռանալ:

Թրաֆիքինգով զբաղվողները կարող են շահարկել Ձեր պարտքը՝ դրանց մարումը բարդացնելով, և կարող են ստիպել Ձեզ հավատալ, որ Դուք պետք է շարունակեք ծառայել իրենց մոտ այնքան ժամանակ, մինչև չմարեք ողջ պարտքը: Պարտքի շահարկման օրինակներ են՝

- Պարտքի պարտադրում, որի վերադարձը բարդ կամ անհնար է ողջամիտ ժամանակահատվածում կամ Ձեր վաստակած գումարի սահմաններում,
- Պարտադրված պարտք, որին Դուք նախապես չէք տվել Ձեր համաձայնությունը, կամ որը գերազանցում է Ձեր համաձայնությամբ ստացված պարտքի գումարի չափը,
- Ձեր վաստակած գումարը որպես պարտքը մարելու միջոց կիրառելու մերժում,
- Պարտքը մարելու համար թրաֆիքինգով զբաղվողի կողմից իրեն ծառայելու ժամկետների մասին Ձեզ պարզաբանումներ տալուց հրաժարում,
- Առանց Ձեր համաձայնության պարտքի գումարին տրանսպորտային, կացարանի, սննդի և այլ վճարների ավելացում,
- Վճարների, հարկերի կամ տուգանքների ավելացում կանոնները խախտելու, ոչ բավարար վաստակելու կամ աշխատանքը ոչ պատշաճ կերպով կատարելու, մարմնավաճառության կամ այլ ծառայությունները ոչ բավարար կերպով մատուցելու համար:

## Կանոններ և վերահսկման լծակներ

Թրաֆիքինգով զբաղվող անձինք և նրանց օգնականները կարող են կիրառել այնպիսի կանոններ և վերահսկման լծակներ, որոնք կբարդացնեն Ձեզ և մյուսների համար փախուստի դիմելը, բողոք ներկայացնելը կամ օգնություն փնտրելը: Օրինակ՝



- Կանոններ, որոնք սարգելում են լքել աշխատավայրը կամ խիստ կանոններ այն մասին, թե աշխատանքից դուրս ուր կարող եք գնալ,
- Կանոններ, որոնք թույլ չեն տալիս Ձեզ մոտ պահել Ձեր սեփական անձնագիրը, մուտքի արտոնագիրը, ծննդյան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթղթեր,
- Բավարար սննդի, հանգստյան ժամերի կամ բուժօգնության հասանելիության մերժում,
- Ձեր ընտանիքի, այլ աշխատողների, հաճախորդների կամ աշխատավայրից դուրս այլ անձանց, օրինակ՝ իրավական կամ սոցիալական ծառայության աշխատողների հետ հաղորդակցության կանխարգելում, սահմանափակում և հսկում:

### Սուտ և խաբեություն

Թրաֆիքինգով զբաղվող անձինք և նրանց օգնականները կարող են դիմել նաև սոի և խաբեության: Օրինակ՝

- Կեղծ խոստումներ տալ աշխատանքի տեսակի, աշխատանքային ժամերի, ապրուստի և աշխատանքային պայմանների կամ աշխատավարձի վերաբերյալ,

**ԽՈՐՀՈՒՐԴ. Մանրամասն գրառումներ կատարեք բոլոր անհարիր խոսքերի կամ գործողությունների վերաբերյալ, որ գործատուն թույլ է տալիս Ձեր հանդեպ: Գրի առեք նաև բոլոր վկաների անուններն ու հեռախոսահամարները:**

- Աշխատանքային լավ պայմաններ խոստանալ, իսկ հետագայում պարտադրել աշխատել զգալիորեն ավելի շատ ժամաքանակով, ավելի խիստ պայմաններով և խոստացվածից ավելի ցածր աշխատավարձով,
- Լավ աշխատանքային պայմաններ խոստանալ, իսկ հետագայում ստիպել, որ Դուք զբաղվեք մարմնավաճառությամբ կամ այլ բնույթի ծառայություններ մատուցեք. օրինակ՝ Ձեզ առաջարկեն բուժքույրության ուսուցչի աշխատանք, սակայն հետագայում ստիպեն, որ Դուք աշխատեք ծերանոցում, կամ առաջարկեն դայակի աշխատանք, իսկ հետո ստիպեն Ձեզ էկզոտիկ պարեր պարել կամ զբաղվել մարմնավաճառությամբ:
- Ասել Ձեզ, որ Դուք չունեք իրավունքներ,

- Ասել Ձեզ, որ Ձեզ չեն հավատա կամ էլ կարտաքսեն, եթե փորձեք օգնություն փնտրել, կամ
- Հրահանգել, որ Դուք թրաֆիքինգով զբաղվող անձի ինքնության մասին կեղծ տեղեկություն տաք:

Ինձ կարտաքսե՞ն արդյոք, եթե հաղորդեմ չարաշահման մասին:

Կան ծրագրեր, որոնք կոչված են պաշտպանելու այն մարդկանց, ովքեր չարաշահումների մասին բողոք են ներկայացնում: Դուք չպետք է վախենաք օգնություն խնդրել, անգամ եթե ներգաղթային հարցերի հետ կապված մտահոգություններ ունեք: Դուք պետք է խորհրդակցեք ներգաղթային հարցերով փաստաբանի հետ, ով չի աշխատում Ձեր գործատուի համար:

Եթե գտնում եք, որ Դուք մարդկանց թրաֆիքինգի կամ որևէ այլ ծանր հանցանքի, այդ թվում՝ բռնաբարության կամ սեռական բռնության զոհ եք դարձել, Դուք կարող եք թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված “T” տեսակի կամ թրաֆիքինգի և այլ ծանր հանցանքներից տուժածների համար նախատեսված “U” տեսակի ոչ ներգաղթային արտոնագրի կամ, որպես այլընտրանք, ԱՄՆ-ում ժամանակավոր կացության իրավասություն ունենալ: Ոչ ներգաղթային մուտքի արտոնագրի այս տեսակները ստեղծվել են զոհերին պաշտպանելու համար: ԱՄՆ-ում շատ մարդիկ T և U տեսակների ոչ ներգաղթային արտոնագրերի մասին տեղյակ չեն, ուստի հնարավոր է՝ հարկ լինի, որ Դուք ինքներդ հայտնեք դրանց մասին այն մարդկանց, ովքեր փորձում են օգնություն ցուցաբերել Ձեզ:

Ինչպիսի՞ ծառայություններ են հասանելի թրաֆիքինգի զոհերին:

ԱՄՆ-ում թրաֆիքինգի զոհերը դաշնային և նահանգային ծրագրերի շրջանակներում ունեն արտոնությունների, ծառայությունների և ներգաղթային աջակցության իրավասություն: Շատ կազմակերպություններ կաջակցեն Ձեզ առաջարկվող ծառայություններից օգտվելու հարցում, ներառյալ բուժօգնություն, ստամուսաբուժական ծառայություններ, հոգեբանական աջակցություն, կացարան, ներգաղթային և այլ հարցերի շուրջ իրավաբանական աջակցություն, աջակցություն աշխատանքի հարցում և հանրային նպաստներ:

# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՎԵՐ ԿԱՅՔԵՐԸ.

- Վիզաների տրամադրման գործընթացի և Ձեր ԱՄՆ մուտքի արտոնագրի մասին տեղեկությունների համար՝ [usvisas.state.gov](http://usvisas.state.gov):
- Մարդկանց թրաֆիքինգի մասին տեղեկությունների համար՝ [www.state.gov/j/ti](http://www.state.gov/j/ti):
- J-1 փոխանակման ծրագրի մասին տեղեկությունների համար՝ [j1visa.state.gov](http://j1visa.state.gov):
- Հավասարության և մաշկի գույնով, սեռով (ներառյալ հղիություն), տարիքով (40-ից բարձր), ռասայական, կրոնական և ազգային պատկանելությամբ, հաշմանդամությամբ կամ գենետիկական ինֆորմացիայով պայմանավորված խտրականությունից պաշտպանված լինելու Ձեր իրավունքների, ինչպես նաև խտրականության մեղադրանք ներկայացնելու գործընթացի մասին տեղեկությունների համար՝ [www.eeoc.gov](http://www.eeoc.gov):
- Աշխատավայրում Ձեր անվտանգության իրավունքների մասին տեղեկությունների համար, կամ եթե կարծում եք, որ Ձեր աշխատանքն անվտանգ չէ, և ցանկանում եք ստուգումներ անցկացնելու պահանջ ներկայացնել, այցելեք [www.osha.gov](http://www.osha.gov):
- Ձեր գործատուի կողմից չվճարված աշխատավարձը ստանալու համար՝ [webapps.dol.gov/wow](http://webapps.dol.gov/wow):
- Ձեր արդարացիորեն վարձատրվելու իրավունքի կամ աշխատավարձի վերաբերյալ բողոք ներկայացնելու համար՝ [www.dol.gov/WHD/immigration](http://www.dol.gov/WHD/immigration):
- Քաղաքացիության կարգավիճակով պայմանավորված խտրականությունից պաշտպանված լինելու Ձեր իրավունքների մասին մանրամասների, ինչպես նաև խտրականության վերաբերյալ բողոք ներկայացնելու համար այցելեք [justice.gov/crt/filing-charge](http://justice.gov/crt/filing-charge):
- Աշխատավարձի կամ աշխատանքային պայմանների բարելավման նպատակով այլ աշխատողներին միանալու Ձեր իրավունքի մասին մանրամասների, ինչպես նաև մեղադրանք ներկայացնելու համար այցելեք [www.nlr.gov](http://www.nlr.gov):

- Ձեր իրավունքների, պարտականությունների և բժշկական ապահովագրությունից սպասման կարգի վերաբերյալ տեղեկությունների համար այցելեք *localhelp.healthcare.gov* (անգլերեն) and *ayudalocal.cidadodesalud.gov* (իսպաներեն)։

**ԽՈՐՀՈՒՐԴ.** Լավ գաղափար է Ձեր աշխատաժամերի վերաբերյալ գրառումներ կատարելը: Մի նոթատետր վերցրեք և գրի առեք բոլոր օրերն ու ժամերը, որ Դուք աշխատել եք, թե որքան եք վարձատրվել, որ սոսաթվերին եք վարձատրվել, որքան պահումներ են արվել Ձեր աշխատավարձից և ինչ պատճառով:

**ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՄՈՒՇԱԶԵՎ**

| Աշխատող: |                 | Ղեկավար:                                       |         |
|----------|-----------------|--|---------|
| Ամսաթիվ  | Գործունեություն | Ժամեր  | Վճարում |
|          |                 | Մուտք: _____<br>Ելք: _____<br>Ընդհանուր: _____ |         |
|          |                 | Մուտք: _____<br>Ելք: _____<br>Ընդհանուր: _____ |         |

